

Լեոն գրականության պատմաբան (կուլտուր-պատմական դպրոց)

Ալեքսանյան Արամ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-35>

Հանգուցային բառեր. Բոքլ, գիտական պատմագիտություն, Լեոն, Հեգել, աշխարհագրական դետերմինիզմ, Մխիթարյան հայրեր, բնական ազդեցություններ

Ներածություն

Լեոն թողել է արտակարգ հարուստ պատմագիտական և գրականագիտական ժառանգություն: Մշակույթի, մասնավորապես գրականության պատմությունները նրա քննական ժառանգության ինքնատիպ և հարուստ էջն են կազմում: Նրա պատմագիտական ժառանգության առանձնահատկությունը և հատկապես գիտական արժեքը պայմանավորվում է հայոց պատմությունը, ինչպես նաև մշակույթը, նոր՝ **գիտական** հետազոտական մեթոդով լուսաբանելու հանգամանքով:

19-րդ դարի երկրորդ կեսից հայ մշակութագիտության իմացաբանության ակունքներում տեղի են ունենում որակական տեղաշարժեր: Արմատապես փոխվում է հայ պատմագիտության իմացաբանությունը: Եվրոպական դրապաշտական ուսմունքների (positivizm) համատեքստում ձևավորվում է նոր պատմագիտական դպրոց, ինչպես նաև **գրական** պրոցեսի ընկալման նոր հայեցողություն:

Հաղթահարելով գրականության դերի իմացումի նախորդ տասնամյակների լուսավորական գաղափարների վերացականությունը՝ դրապաշտական գրականագիտությունը և քննադատությունը, ըստ էության, առաջադրում են գրականության զարգացման նոր հայեցակարգ, որի ձևավորմանը նպաստում են հատկապես եվրոպական իմաստասիրական նոր ստեղծված ուսմունքները:

Ի տարբերություն պատմության ընթացքի **նախախնամական** (Արարիչ) և **լուսավորական** (աշխարհը կառավարում են գաղափարները) պատկերացումների վերացականության՝ դրապաշտները պատմության առաջ շարժող գործոնները պատմության ընթացքը կանոնակարգող և որոշող պատճառակիրները (de'terminant) և օրենքները բացահայտում էին պատմության ընդերքում:

Ազգը, ժողովուրդը և պետությունը արդեն դիտվում են որպես հոգեբանական և մշակութային օրգանիզմ, որի քաղաքակրթվածության աստիճանը որոշում են Բոքլի պատմաաշխարհագրական հայտնի նախադրյալները (կլիմա, սնունդ, հող, հարստության բաշխվածություն, բնակչության աճ, գիտելիքների մակարդակ և դրանց տարածվածության աստիճան և այլն):

Հայտնի է, որ **գիտական** պատմագիտությունը ավելի ուշ շրջանի երևույթ է: Վերջինիս որոշարկման համար անհրաժեշտ են գիտական մտքի զարգացման անհրաժեշտ և բավարար **գիտական** նախադրյալներ: Իմացության այդ մակարդակում պատմությունը աղեն ոչ թե **պատմվում է**, այլ նաև **բացատրվում** ու իմաստավորվում: Ավելին, այլ կերպ է ընկալվում նաև մշակույթի, մասնավորապես գրականության գործառույթը: Պատմության **դրապաշտական** պատկերացումներից են սերվում հիմնականում գրականությունը և մշակույթին ուղղված Լեոնի առաջադրումները:

Իրականում Լեոն **կուլտուր-պատմական դպրոցի** հետևորդ է: Նրա պատմագիտական, գեղագիտական, քննադատական հոդվածները, ըստ էության, շարադրված են **կուլտուր-պատմականության սկզբունքով**:

Իմացաբանական այդ համատեքստում է, որ Լեոն հատկապես կարևոր և անհրաժեշտ գործառույթ է վերագրում կրոնին, որպես ազգային հանրության միասնացման արմատական **մշակութային** գործոն: Մինչդեռ, ըստ պատմաբան Մ. Ներսիսյանի, «Լեոնի աշխատություններում խիստ գերազանահատված է «հոգևոր ֆակտորի դերը մարդկային հասարակության զարգացման գործում» [4, X]:

Լեոն, ըստ տեսաբանի, գերազանահատում է կրոնի դերը պատմության մեջ: «Կրոնները քաղաքակրթության ամենահզոր գործոններից մեկն են եղել» Լեոնի դրույթը դիտվում է որպես ծայրահեղություն: Մինչդեռ դրապաշտ պատմագիտության տեսանկյունից պետության բարեկարգությունը ձեռք է բերում կայունություն, եթե հիմքում ունի կրոնականությունը:

Ավելին, մարդու գործունեությունը, ըստ գերմանացի իմաստասեր Հեգելի, միայն կրոնով և հավատքով է ձեռք բերում բացարձակ հիմնավորում և միայն հավատքով է դրականորեն գործարկվում պատմության ընթացքի հյուսվածքում: Այդ պատճառով էլ պետությունը պետք է հիմնվի կրոնի վրա, քանի որ միայն նրանում են մարդկային մտածելակերպը և պետության, հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի կատարման պատրաստակամությունը դառնում կատարյալ և բացարձակ: Կրոնից դուրս, ըստ Հեգելի, մարդու սուբյեկտիվ ես-ը մնացած բոլոր դեպքերում պարտքի թերակատարության վերաբերյալ բազմաթիվ պատճառներ և հիմնավորումներ կարող է բերել՝ անձնականորեն՝ սուբյեկտիվորեն, արդարանալով իր վերջավոր գոյության տրամաբանությամբ: «Միայն կրոնն է գորու վերացնել, ի չիք դարձնել այդ բոլոր սուբյեկտիվ դատողությունները և գնահատականները ու հաստատել անսահման, բացարձակ պարտքի զգացումը» [2, 283]:

19-րդ դարի վերջում Կարլ Լամպրեխտի առաջադրած **կուլտուր-պատմական** տեսության հիմնադրույթներով, որոնք այլազան փոփոխակներով յուրացվեցին տարբեր մտածողների կողմից, հիմնավորվում էր, որ պատմությունը կայանում է ոչ թե արտաքին ներգործությամբ, այլ իր ներսում առկա որոշակի օրենքներով ու օրինաչափություններով և ունի ներքին միասնականություն, ամբողջականություն: Բնարկել, կուլտուր-պատմական տեսությունը ձևավորվում և համակարգ է դառնում Թովմաս Բոքլի պատմահայեցողության և հետագա գիտական ճանաչողության և դրական գիտելիքների զարգացման շնորհիվ ազգի պատմությունը գիտակցվում ու ընկալվում է արդեն որպես բնակազմական ամբողջական, միասնական **մշակութային** հիշողություն, ինչպես նաև բարեշրջական զարգացում ունեցող իրողություն:

Եթե նախապես ժողովրդի պատմական, հասարակական և մշակութային կյանքի առանձին կողմերը միացվում էին մշակութային գուտ էկլեկտիկորեն, ապա ըստ կուլտուր-պատմականության տեսության, էթնոսի գոյաբանության տարբեր փուլերը և ոլորտները արդեն կարելի է համարել **մշակույթով** համադրված օրգանական համակարգ, ուր պատմական ողջ իրողությունները որոշարկվում և դրսևորվում են ժողովրդի բնապատմական ինքնաստեղծ կենսաձևի, փորձառության և պատմական գիտակցության համատեքստում:

Այդ ըմբռնման տեսանկյունից է, որ մշակույթը ընկալվում և գործառվում է նաև որպես ապագան նպատակաբանող անհրաժեշտ և առկա գոյաբանական նախադրյալ, միջոց: Դրապաշտները հիմնավորում էին, որ պատմության ընթացքը պատճառաբանվում և անհատականանում է առաջին հերթին էթնոսի հոգեկերտվածքով, որը դրսևորվում, առարկայանում է նաև մշակութային փոխաձևությամբ (transformation):

Էթնոսի հոգեկերտվածքն էլ, ըստ դրապաշտության, իր հերթին ձևավորվում, անհատականանում է **աշխարհագրական հիմնարար գործոնի** ներգործությամբ:

Նա պատմում է անդուլ, որ դարերի սկզբից հայ հայրենիքի **տեղագրական և բնագրական** հանգամանքները դարբնել են հայ ժողովրդի համար մի **ազգային հոգեբանություն**, որի

թանձրացած արտահայտությունն է հայը իբրև **ազգագրական-կուլտուրական տիպ** իր հայրենիքի գանազան մասերում» (ընդգծումները մերն են-Ա. Ա.) [5, 755]:

Բոքըլը, որի գաղափարներն էին որդեգրել հայ դրապաշտ պատմագիրները, այն կարծիքին էր, որ պատմագիրները «հիմնականում զբաղվել են անձերով, մինչդեռ օրենքը գտնելու համար հարկավոր է հետազոտել ոչ թե անձերը, այլ նաև գանգվածները» [3, X]:

Այդ հայեցողության որդեգրման շնորհիվ է, որ, Լեոյի շարադրանքներում **պատմությունը** և **մշակույթը** ներկայանում են արդեն որպես օրգանական, սերտ, փոխկապակցված համակեցություն (symbiosis): Պատահական չէ, որ մշակույթի, գրականության պատմության, գրականության, գրական գործիչների, գրականության տարբեր շրջանների վերաբերյալ Լեոյի աշխատասիրած հետազոտությունները առանձնանում են մի առանձնահատկությամբ: Նրանցում բնության, աշխարհագրական միջավայրի շարադրանքը, պատմագրությունը, պատմագիտությունը, գրականագիտությունը, ինչպես նաև իմաստասիրական խոսքումները սերտորեն միահյուսված են և ներկայանում են որպես **սինկրետիկ** շարադրանք:

Լեոն կրկին դրապաշտ պատմաբան է նաև այն դեպքերում, երբ անդրադառնում է գրական և մշակութային կյանքի բազմապիսի երևույթներին: Իրականում հայ գործիչների մասին դարասկզբին աշխատասիրած նրա գրքերը («Ստեփանոս Նազարյանց», Երկու հատոր (1902 թ.), «Գրիգոր Արծրունի», երեք հատոր (1902-1905), «Մեսրոպ Թաղիադյան», «Ռուսահայոց գրականությունը» (սկզբից մինչև մեր օրերը), որը սպազորվել է նախապես Վենետիկի «Գեղունի» տարեգրքում և «Բազմավեպ» հանդեսի համարներում, իսկ 1904 թ. առանձին գրքով), ծավալուն աշխատությունները, ըստ էության, գրված են պատմական և կենսագրական հարուստ նյութերի համապատկերում և կարելի է ընդունել որպես **գրական մշակույթի պատմություն**:

Պատմական միջավայր: Այսպես, «Ստեփանոս Նազարյանց» աշխատության շարադրանքում Լեոն չափազանց մանրակրկիտ կենսագրական և պատմական տեղեկություններով պատկերում է Ստ. Նազարյանցի կյանքը ու գործունեության պատմական, հասարակական, իմացաբանական և մշակութային միջավայրը: Նախ ներկայացվում է գերմանական իրականության իմացական միջավայրը, որում ձևավորվել են Ստեփանոս Նազարյանցի հայացքները¹: Ի դեպ, Լեոն Ստ. Նազարյանցին ներկայացնում է միայն պատմական **որոշակի** փուլի համատեքստում, նրա պատմական առաքելության սահմաններում, այսինքն՝ **պատմականության** (историзм) գործոնի հաշվառմամբ: Ըստ Լեոյի՝ Ստ. Նազարյանցի կոչվածությունը արդյունք էր **պատմական անհրաժեշտության**, թելադրված էր և կյանքի էր կոչվում զարգացող պատմական պրոցեսների ուժով. «Ուսուցիչ էր մեզ համար Նազարյանցը: ...նա իբրև լուսավորված մարդ, լայն, աշխարհաշեն գաղափարներով, ջերմ հավատացող երկրպագու, **հասկացավ ժամանակի խորհուրդը, դարձավ նրա մարգարեն** (ընդգծումն մերն է-Ա. Ա.) [5, 204]:

Իսկ ինչպիսի՞ն էր մինչ այդ հայ ավատական իրականությունը: Խաչատուր Աբովյանի

¹ «Գրական «Երիտասարդ Գերմանիա» ուղղության հիմնադիրներն էին «երկու տաղանդավոր հրեաներ՝ Լյուդվիգ Բյորնեն և Չեռիքիս Չայնե» [5, 36], որոնք քաղաքում էին վերածնություն և պայքարում էին ավատական կյանքի անշարժության, պահպանողականության դեմ: «Գրական թարմ հոսանքին միացավ և գերմանական փիլիսոփայությունը, որը կամաց-կամաց սկսեց հրաժարվել վերացական մետաֆիզիկայից ու մոտենալ իրական կյանքին, սկսեց հետաքրքրվել ոչ միայն բարձրաթիղջ դատողություններով, այլև օրվա քաղաքական հարցերով» [5, 38]: Լեոյի շարադրանքի յուրահատկությունը և ճանաչողական արժեքը այդ միջավայրի մանրակրկիտ ներկայացման մեջ է: Գերմանական գրական, քաղաքական, մշակութային միջավայրի տեղեկությունները նա քաղում է օտարալեզու գրքերից, մամուլից, հեղինակի հուշագրությունից և այլ աղբյուրներից: Այդ աշխատասիրության արժանիքներից է նաև **քննական** մոտեցումը:

և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի Արարատի գագաթը բարձրանալու առիթով Լեոն գրում է. «Հայոց հինավուրց հսկա սարն ինքը, հայությունն էր. անշարժ ու մշուշապատ, անմատչելի, նախապաշարմունքների և առասպելների մեջ թաղված» [5, 25]:

«Եվ ահա եվրոպական գիտությունը գալիս էր ոտնակոխ անելու այդ դարավոր առասպելներն ու ավանդությունները»,– գրում է Լեոն [5, 24]:

Եվ, իրոք, գիտությունների զարգացումը աստիճանաբար փոխում է ոչ միայն գրականության բովանդակությունը, տիպաբանությունը, այլև մարդկանց գիտակցության, բարոյական ըմբռնումների և հասարակական վարքի կերպը:

Ըստ Լեոնի, եվրոպական քաղաքակրթությամբ մակածված հայկական լուսավորական շարժումը՝ հանձինս Վիեննայում հրատարակվող Մխիթարյան հայրերի «Հանդես ամսօրյա» ամսագրում տպագրած գիտական նյութերի, Խաչատուր Աբովյանի լուսավորական գործունեության, «Հյուսիսափայլ» ամսագրի, կատարվում է դարակազմիկ բարեշրջական հեղաշրջում:

«Ժամանակը պահանջներ էր անում հայ հասարակությունից: Այդ պահանջները հասկացան հասարակության առաջավոր, երիտասարդ ուժերը, որոնք սկսեցին գործել: Առաջ եկավ «Հյուսիսափայլը». նա պետք է առաջ գար, էթե մեր հասարակության մեջ կար կենսունակություն: Ժամանակը ստեղծեց նրան, եվրոպական միտքը նրա միջոցով գալիս էր մեզանից տեղ ու հպատակություն պահանջելու» [5, 171]:

Այդ առումով Ստ. Նազարյանցը ռուսահայ իրականության մեջ այն առաջնեկն է, որը լուսավորական գաղափարախոսության դիրքերից պայքարեց ավատական մտայնության դեմ՝ հանուն նոր գիտական մտածողության (գիտական ճանաչողություն, նորովի դաստիարակություն, ֆեմինիստական հարցադրումների և այլն) մարմնավորման:

Ստեփանոս Նազարյանցի լուսավորական գործունեության գնահատման նման հայեցակետը ենթադրում է, որ Լեոն պատմությունը, ի տարբերություն Մխիթարյան հայրերի նախախնամական պատմահայեցության, դիտարկում է դրապաշտորեն, զարգացման առանցքի վրա:

Հասարակական հոսանքների պայքարում անգամ Ստ. Նազարյանցը իր հնամով հակառակորդին (Առաքել վարժապետ Արարատյանցին) հարվածում էր «Եվրոպական գիտության զենքերով» [5, 76]:

Լեոն մանրամասնորեն գնահատում է նաև Ստ. Նազարյանցի ժառանգությունը, թարգմանական գործունեությունը:

Լեոն հպանցիկ արժևորում ու գնահատում է նաև «Հյուսիսափայլի» էջերում տպագրված զեղարվեստական և թարգմանական գրականությունը:

Ավատական միջնադարը աստիճանաբար զիջում էր դիրքերը, և «...նրա փոխարեն մեր գրականության մեջ էր մտնում տասնիններորդ դարը, բնագիտության, հետազոտության, դրական ուսումնասիրությունների դարը: ...Նազարյանցը առաջինն էր ոչ թե հայոց գրականության մեջ, այլ ռուսահայերի մեջ, որ այդ նոր ուղղության առաջնորդը հանդիսացավ» [5, 74]:

Բարձր գնահատելով սակայն լուսավորական շարժումը՝ Լեոն իրականում այն համարում է պատմական զարգացման հերթական մի փուլը: Այդ իսկ պատճառով, նա ոչ միայն ներկայացնում է երևույթը, այլև, ըստ էության, այն գնահատում է պատմական զարգացման դիրքերից, ինչը պատմական, գրական երևույթները հետազոտող նրա շարադրանքների հաղորդում է **քննական, վերլուծական** բնույթ:

Ժամանակները նախապատրաստում էին **դրապաշտության** դերը: Ընդ որում, այդ նախապատրաստման գործում մեծ դեր խաղացին լուսավորիչները: «Հյուսիսափայլը» ներկայացնում են մեր մշակութային պատմության առաջին փուլը, Նազարյանցի ձևակերպմամբ՝

«առաջաբանը», որով և նախապատրաստվում է այդ պատմության դրապաշտական էտալը, որի առաջատար ներկայացուցիչն էր Գրիգոր Արծրունին: «Նա գալիս էր պատասխան տալու, գալիս էր առաջաբանը շարունակելու»,– գրում է Լեոն: Նազարյանցի **պատմական առաքելությունը** համահամարենք արժևորում է Շիրվանգաղեն. «Դու ասպարեզ եկար այն ժամանակ, երբ նոր միայն հայի խավար հորիզոնի վրա նշմարվում էր լուսո շողքը» [5, 253]:

Գրական գործչի գործունեության և ստեղծագործության հետազոտությունը առավել համարժեք դարձնելու նպատակով Լեոն կարևոր նախադրյալ է համարում նաև նրա **կյանքի և բնավորության** մանրամասների մեկտեղումը:

Ամհատականացնող այդ գործուն նախադրյալը կարևորելով՝ Լեոն հետազոտության շարադրանքին հավելում է, համադրում է նաև գործչի կամ հեղինակի **մանկությունը, կենսագրությունը և բնավորության գծերը:**

Նման կարգի տեղեկությունների մեկտեղումը և կիրարկումը նրա հետազոտության մեթոդաբանությունը, ըստ էության, լրացնում, իրացնում, հարստացնում է ֆրանսիացի ակնավոր գրականագետ, գրականության տեսաբան Սենթ-Բյովի (1804-1869) **կենսագրական-հոգեբանական** հետազոտության մեթոդի հնարավորություններով: Այսպես, «Ստեփանոս Նազարյանց» աշխատության էջերում շարադրված է «Գծեր Նազարյանցի բնավորությունից» հատվածում [5, 197-202], ներկայացված է նաև Ստեփանոսի բնավորությունը, ծնողների բնավորությունը, նրանց ընտանեկան կենցաղավարությունը:

Իսկ Գրիգոր Արծրունու կենսագրության շարադրանքում շեշտվում է նրա հոր բնավորության մի կարևոր հատկանիշ: «Դա մի տոկուն մարդ էր, որ հետևում էր իր հաստատ կամքին և անպատճառ հասնում էր իր նպատակին» [5, 224]:

Լեոն ներկայացնում է անգամ եղբոր՝ Երեմիա Արծրունու բնավորության գծերը (կամային, նպատակասլաց, համառ, ազնիվ, ուղղամիտ, անաչառ և այլն): Լեոն պատմում է նաև Գրիգոր Արծրունու **հիվանդությունների** մասին:

Ըստ էության, Լեոյի հետազոտության մեջ գործչի գաղափարներին է զուգակցվում նախնիներից **ժառանգած մտախառնվածքը:** Այս աշխատության առավելություններից է տեղեկությունների առատությունը և երևույթների մանրակրկիտ նկարագրությունը:

Լեոն ներկայացնում է Մոսկվայի և Պետերբուրգի այն միջավայրը, որտեղ ձևավորում են ուսանող Արծրունու հայացքները, այնուհետև Եվրոպայի՝ Չեյդլերգի համալսարանի միջավայրը:

Լեոն շեշտադրում է, որ **կենսագրական** դիպվածները նույնպես էական դեր են խաղացել «Մշակի» խմբագրի գործունեության ճանապարհին, ինչպես նաև «Էվելինա» վեպի հոգեման ժամանակ որպես հոգեբանական դրոշիչ: Վեպը առանձնանում է նրանով, որ ունի կենսագրական ենթատեքստ: Իրականում Արծրունին հափշտակված է եղել մի կնոջով, և նրա հետ ունեցած իրական ապրումները և կենսագրական դրվագները լրացրել են վեպի սյուժետային հենքը: Այդ մասին է վկայում նաև Ալ. Շիրվանգաղեն: Ֆրանսուհու սերը փոխադարձ էր, սակայն հետագայում այդ աղջիկը հրապուրվում է մեկ ուրիշով, և մերժված սերը Արծրունուն հասցնում է ծայրահեղ հիասթափության:

Մի ժուս մտերիմ բարեկամ, սակայն, խորհուրդ է տալիս, որ կյանքը դեռևս չի կորցրել իր իմաստը, «որ նա կարող է մոռանալ իրեն հասցրած մահացու հարվածները, եթե լայն տեղ բաց անե իր մեջ մի ուրիշ, ավելի վսեմ, ոչ էսական զգացմունքի համար՝ սեր դեպի տանջվող մարդկությունը: Այս բարձր գաղափարն էլ դառնում է մեր երիտասարդի համար փրկության խարիսխ, նրա անձնական դժբախտությունը դառնում է մի պատվանդան, որի վրա բարձրանում է ընդհանուրի բախտավորության գաղափարը: Եսականը, անհատականը տեղի է տալիս սքանչելի մարդասիրության: Ծառայել տանջվողներին...» (ընդգծումս մերն է-Ա. Ա.) [5, 249]: Դրանից հետո նրա մեջ կատարվում է հեղափոխություն, արմատական շրջադարձ:

Ճանաչողության նման բազմաձև ստ քննությունը անհամեմատ մեծացնում է Լեոյի հետազոտությունների **գիտականության** գործակիցը:

Մակայն, «Էվելինան» վեպի ստեղծման հոգեբանական պատճառաբանող դրդիչները, ըստ էության, մնացել էին հետազոտողների տեսադաշտից դուրս: Այդ ազդակները, ըստ էության, Արծրունու **բնավորության ու արտաքին նկարագրի** մեջ էին և դիտարկելի են միայն կենսագրական-հոգեբանական գրականագիտության հետազոտական եղանակի հնարավորություններով: Այդ տեսանկյունից կարևոր տեղեկություն է հաղորդում Արծրունու **արտաքինի**, որպես որոշիչ գործոնի, մասին Շիրվանզադեն իր հուշագրության էջերում²:

Կենսագրական տեղեկություններին կարևորություն տրվում նաև Լեոյի մյուս երկերում («Մերոպ Թաղիադյան», «Ղազարոս Աղայան»): Այդ հետազոտություններում նա կրկին քննում է ժամանակը, ապա մանրակրկիտ ներկայացնում է պատմական իրականությունը: Այնուհետև՝ հավելում է կենսագրական ակնարկ: Լեոն այնքան հետևողական է կենսագրական տեղեկությունների մեկտեղման ջանքերում, որ Մերոպ Թաղիադյանի կենսագրությունը ամբողջացնելու նպատակով պեղել է անգամ Էջմիածնի հայրապետական դիվանը՝ այն լրացնելով հեղինակի ինքնակենսագրական փաստերով և մամուլում տպված հոդվածների տեղեկություններով:

² Արծրունին «փոքրամարմին էր, սպառնող», սնափառ էր, փառասեր, «ինքնասեր հիվանդության չափ», – վկայում է Շիրվանզադեն: «Այդ մարդու բնույթը հավասարակշռությունից գուրկ էր, և դա նրա դժբախտությունն էր: Նա ոչ միայն չափազանց ներվային էր, այլև մաղձոտ: Հոգեբանորեն դա ուներ իր բնական պատճառը: Մարմնավոր դրությունը մանկությունից ազդելով նրա պսիխիկայի վրա, տարիների ընթացքում ծայրաստիճան սրել էր նրա անձնասիրությունը: Այն կծու բողոքը բնության անիրավության դեմ, որ մարդ լռորեն կրում էր իր մեջ, աստիճանաբար մաղձոտել էր նրան... երկու միջոց կար այդ հոգեկան ժանգը ոչնչացնելու համար – կամ բարձր փիլիսոփայական մտայնություն, որ հատուկ է շատ քչերին, կամ դիվային հեզմանք ու ծաղր բնության երեսին, որ հատուկ է դարձյալ շատ քչերին: Արծրունին չուներ ոչ մինը և ոչ մյուսը»: Նա, ըստ էության, տառապում էր: «Սիրելով կյանքն անհունորեն, Արծրունին զգում էր, որ կյանքը ոչ սիրով, այլ կարեկցությամբ է նայում իրան» [7, 172]:

Իր կենսագրության կենսական դրվագը՝ մերժված սիրո վիրավորանքը, դրա պատճառած տառապանքը, կյանքից մերժված լինելու հոգեկան ճնշվածությունը Արծրունին, ըստ էության, հաղթահարում է՝ ստեղծելով արդեն կատարված եղելության վիպական համարժեքը, ուր հերոսները մատուցվում են հեղինակին ցանկալի արժեքային նկարագրով, նրա համար ճանաչողության պաշտպանական նշանակություն ունեցող մի հայեցողության համատեքստում, որը կատարսիսի գործառույթ ունի առաջին հերթին հենց հեղինակի համար:

Վեպի հղացքը «հավասար բարոյական մակարդակի վրա մնալու» կենսական պահանջի արդյունք է, ուր առավել մեծ դեր ունի հեղինակի ենթագիտակցության ոլորտը, որը գեղարվեստականացման միջոցով, դրա թողի տակ կազմակերպում է կատարվածի վերարժեքավորում, որի շնորհիվ էլ ձեռք է բերվում հոգեկան ատարաբսիա: Վեպում հեղինակը իրականությունը շրջում է իր օգտին, իր բարոյական հաղթանակը կազմակերպում է վիպական իրականության մեջ և նրա շնորհիվ: Նրա հռչակը, հանրօգուտ, ազգանվեր գործունեությունը վեհացնում են նրա բարոյական նկարագիրը:

Ավելին՝ նվազեցվում են զգայական սիրո նշանակությունը և խորհուրդը մարդու կյանքում և **բացառակացվում** հանրությանը նվիրվելու առաքելությունը, որը նույնպես պաշտպանական խոհանությունն է: Դա է պահանջում վեպի տրամաբանությունը, որի նպատակը հեղինակ-հերոսի բարոյական, հոգեբանական հաղթանակը կազմակերպելն է:

Իր վեպով հեղինակը անուղղակիորեն վրեժ է լուծում իրականությունից: Ըստ էության, նման կենսագրական ատաղձ ունեցող վեպը մշակութային դերառույթ ունի առաջին հերթին հեղինակի համար:

Եվ այսպես, գրականության պատմության քննությունը Լեոյի կողմից արվում է **պատմականության** հաշվառմամբ:

Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան, ըստ նրա, ունի հետազոտության ենթակա պատմա-քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգևոր նախադրյալների որոշակի համատեքստ: Այստեղից էլ նրա հետազոտությունը ձեռք է բերում առարկայական դիտարկում, որն էլ պայմանավորում է շարադրանքի անաչառությունը:

Ըստ էության, Լեոյի վերոհիշյալ աշխատությունները գուտ գրականագիտություն չի կարելի համարել, այլ տվյալ գործի կենսագրության և գործունեության, հասարակական հոսանքների, պատմական ու մշակութային միջավայրի պատմություն:

Այդ իմաստով, Լեոյի այդ աշխատությունները կարելի է նաև համարել ներկայացվող ժամանակաշրջանի հասարակական մտքի պատմություն: Ավելին, Լեոյի շարադրանքը մասամբ կարելի է համարել ժամանակաշրջանի մատուլի պատմություն:

Ստ. Նազարյանցի և Գրիգոր Արծրունու և նրանց հրատարակած «Հյուսիսափայլի» և «Մշակի» բովանդակության մանրակրկիտ տեղեկատվությամբ Լեոն, ըստ էության, ամբողջացնում է մի քանի տասնամյակների հասարակական մտքի ամբողջական պատկերը իր զարգացման ընթացքի համապատկերում: Այստեղից գրականությունը արժևորվում է, երբ դառնում է **հասարակական իդեալների** արտահայտող: Նման աշխարհընկալման համաձայն, ապագան դրսևորվում է արդեն հայտնի նախադրյալների շնորհիվ, ընդ որում, բարեշրջական նպատակաբանվածությամբ (телеология):

Լուսավորական «Հյուսիսափայլը» և դրապաշտական «Մշակը», ըստ էության, արմատապես փոխեցին հայ հասարակական գիտակցությունը:

«Գռունկ», «Մեղու», «Արարատ», «Հայկական աշխարհ», «Մասյաց աղավին», «Ճաքաքաղ», «Գարուն» և այլ հանդեսների մթնոլորտում, ուր հիմնականում ազգայնական, կրոնական, եկեղեցական խնդիրներ էին արծարծվում, Ստ. Նազարյանցը և Գրիգոր Արծրունին սկսեցին իրենց վերանորոգչական, ազատամտական գաղափարների քարոզչությունը և, Լեոյի բնութագրմամբ, ստեղծեցին հրապարակախոսական լեզու:

Գրականության պատմաբանները պարբերացնում են այս փուլերը որպես **պահպանողական և ազատամտական** հոսանքների հակամարտություն:

Ազատամտականների գործունեության և գաղափարների իմացաբանությունը իրականում **դրապաշտությունն է** (pozitivizm), որի արմատական պահանջներից մեկը **օգտապաշտությունն էր**, որի տեսանկյունից էլ Լեոն գնահատում է Արծրունու գործունեությունը³:

Լեոն ըստ արժանվուն գնահատում է Արծրունու առաջադրած օգտապաշտությունը (utilitarizm): Այդ հայեցողությամբ, բոլոր կարգի երևույթները գնահատվում են իրենց **օգտակարության** տեսանկյունից: Գրական ստեղծագործությունները գրվում են այն նպատակով,

³ «Ահա ինչ գրականություն չկար հայերի մեջ: Գրքեր, իհարկե, կային, հեղինակներ, թարգմանիչներ եղել էին և կային: Բայց դրանք «իդեալիստներ էին»: Գալիս է ռեալիստ մարդը և ասում է՝ գրականություն չկա: Նրանք չեն հասկանում, չեն հասկանում, որ ռեալիստի համար այդ գրքերը, որքան էլ գեղեցիկ լինին, ոչինչ են, քանի որ **օգուտ** չեն բերում ժողովրդին, ոչինչ են, ինչպես նկարչի այն հիանալի պատկերը, որ ներկայացնում է բնությունը, բայց որից ոչինչ օգուտ քաղել չէ կարող ժողովուրդը: **Օգուտ, միայն օգուտ:** Ինչի՞ս է ձեր մաքուր արվեստը... Ինձ հարկավոր է օգուտ քաղել գիտությունից, քաղաքակրթությունից և ինձ համար այն ամենը, ինչ իմ անմիջական, իրական օգուտից դուրս է, գոյության իրավունք չպիտի ունենա. Ես ժողովուրդ եմ, իսկ դուք ի՞նչ եք տալիս ինձ, ազգասիրական ճառե՞ր, խրատե՞ր, վարդի ու սոխակի պատմություն... Ժողովուրդը, նրա կյանքը, նրա օգուտը, հողը, արդյունաբերությունը և գիտություն, դրական գիտություն՝ ահա ինչ դրոշակով է մեզանում հրապարակ գալիս մեզանում այդ նոր մարդը» (ընդգծումը մերն է-Ս. Ա.) [5, 311]:

որ սովորեցնեն հասարակությանը մտածել և իր կյանքը քննել, ուրեմն և ձգտել դեպի լավը, դեպի առաջադիմությունը [5, 300]:

Նա առաջադրում էր ընտանիքի բարենորոգման, կնոջ ազատության, հասարական կյանքի, կրթության, դաստիարակության, տնտեսավարման ձևերի խնդիրներ և դրանց լուծման եղանակներ:

Արծրունին ջանում էր ավանդական մտածելակերպը, մտախառնվածքը, աշխարհի, կյանքի, բարոյականության դրական իմացությամբ վերակազմակերպել քննական, գիտական, բարոյական գիտակցության: «Զարգացած խելքը անբարոյականության թշնամին է. զարգացրեք խելքը, և բարոյականությունը, որ մեծ կապակցություն ունի նրա հետ, ինքնըստինքյան կգա»,- գրում էր Արծրունին [5, 291]:

Նրան մտահոգում էր նաև, որ թույլ է հայի ազգային ինքնաճանաչությունը, և նա իր գործերով ջանում էր սերմանել այդ գիտակցությունը:

Գրապատմական և գիտական արժեք ներկայացնող աշխատություններից է Լեոյի «Ռուսահայոց գրականությունը (սկզբից մինչև մեր օրերը)», որը տպագրվել է նախապես Վենետիկի «Գեղունի» տարեգրքում և «Բազմավեպ» հանդեսի համարներում, իսկ 1904 թ. հրատարակվել է առանձին գրքով: Այդ աշխատությունը նույնպես պետք համարել գրականության պատմություն:

Գրականության գնահատման Լեոյի տեսական ելակետերը ուսումնաստված են 19-րդ դարի ռուս անվանի իմաստասերներ և գրաքննադատներ Ն. Չեռնիշևսկու, Վ. Բելինսկու, Դ. Պիսարևի աշխատություններից: Ի դեպ, Լեոն հաճախակի է ծավալուն մեջբերումներով վկայակոչում նրանց տեսակետները:

Կյանքի, մարդու հոգեբանության ռոմանտիկական գեղարվեստականացման կերպը Լեոն պատմականորեն համարում է այլևս ժամանկավրեպ. «...մի թե վեպի կոչումն է միշտ երկնայինը նկարագրել: Վեպը առանց իրական ճշմարտության ոչինչ է, երևակայության զառանցանք է: Վեպի նյութը, նպատակ, ամբողջ գոյության խնդիրը կյանքն է, այն էլ երկրի, աշխարհի կյանքը, որ այնքան քիչ առնչություն ունի երկնքի և երկնային կյանքի հետ» [6, 21]:

«Գեղարվեստը անմիջապես կապված է կյանքի հետ, նույնիսկ բնության գեղեցկությունները գրավում են մեզ, նայած մեր ներքին աշխարհի տրամադրության, մեր հասկացողություններին»: Դրապաշտ գեղագետի հայացքով Լեոն բացատրում է, որ «իդեալը չի ստեղծվում առանց կյանքի և առանց մարդու բնությունը ուսումնասիրելու...» [6, 510]:

Ըստ նրա՝ ժամանակավրեպ է այլևս սիրահար գոյգեթի և հնապաշտ ծնողների բարոյական հակոտնյա ըմբռումները պատկերող լուսավորականության ժամանակաշրջանում առաջադրված թեմատիկան:

Լեոյի պատկերացմամբ գրականությունը մեծ դերառույթ ունի հասարակության և պատմական խնդիրների կազմակերպման պրոցեսում: Գրողը և կյանքը փոխազդեցական բազմապլան կապերի մեջ են: Նրա ձեռքը պետք է լինի «հասարակական զարկերակի վրա»: Գրողը պետք է մարմնավորի, «մարմին և արյուն հաղորդի» կյանքի այն իրողություններին որոնք կան «բայց աննկատելի են, լավ ձևակերպված, լավ ըմբռնված չեն»:

«Մարդկային բոլոր գործերը պետք է ծառայեն մարդու օգտին, էթե չեն կամենում լինել դատարկ և անբովանդակ պարապմունք: ...Ասում են, թե գուտ արվեստը արդեն այն օգուտն է տալիս մարդուն, որ մեղմացնում է նրա սիրտը, բարձրացնում է հոգին: Այո՛ դա ճիշտ է: ...Գեղարվեստը ավելի բարձր ու բարդ, հիմնավոր նշանակություն պիտի ունենա մարդու համար» (6, 510):

Լեոն գրական երևույթները դիտում առաջադիմության տեսանկյունից, իսկ դրան կարող է նպաստել կյանքը խորությամբ ընկալող և գիտական հայացքի ենթարկող և առավել ևս **գարգացման իդեալներ** առաջադրող գեղագետը: «...Տեղեկեցիա բառը դատարեց արհամար-

հանք ներշնչող մի հասկացողություն լինելուց: Իսկապես ի՞նչ է այդ տենդենցիան: Հեղինակը գիտակցական դիտավորություն է ունենում ընթերցողի մեջ մի հայտնի միտք զարթեցնել, մի հայտնի զգացմունք շարժել և դրանով հասնել մի հայտնի նպատակի: ...Տենդենցիան ծագում է այն տեսակ հեղինակների մեջ, որոնք անտարբեր հանդիսատեսներ չեն, որոնք մարտնչողներ են հասարակական բարիքի համար, որոնք ծառայում են իրանց ազգին և չեն կարող չնվիրել իրանց սիրտը, իրանց ուժեղ ստեղծագործական շնորհքը այն գաղափարին, որը պաշտում են իրանց կյանքում:Իսկական, սրբազան ոգևորությունը երևան է գալիս և տենդենցիոզ գրողի մեջ» [6, 510]:

«Ահա ինչ տեսակ գրական դաստիարակություն էին ստանում ռուսահայ գրողները: Եվ այդ դաստիարակության վրա հիմք դրեց մեր ամբողջ գրականությունը, նա դարձավ մեզ ղեկավարող սկզբունք, նա անմիջապես կապվեց մեր կյանքի հետ, և **եթե մեր գրականությունը ունեցել է փայլուն շրջաններ, այդ միայն և միայն շնորհիվ այն հանգամանքի, որ մեզանում այդպես է հասկացվել գեղարվեստի կոչումը:** Գրականություն և կյանք-ահա մեծ, անչափ կարևոր սկզբունքը» [6, 511]:

Որքան որ դարասկզբին մշակված տեսությունները քննադատական բնույթ ունեին և խորտակում էին արգելքները նոր հասարակարգի ստեղծման համար, նույնչափ նոր ժամանակները, դրապաշտների կարծիքով, պետք է դառնան ստեղծագործական՝ գիտության հիմքի վրա արդյունաբերական հասարակություն կազմակերպելու համար, որի նշանաբանն է՝ «Մերն՝ իբրև սկզբունք, Կարգը՝ իբրև հիմք, Առաջադիմությունը՝ իբրև նպատակ: Նրա բարոյական բանաձևն է՝ ապրել ուրիշի համար» [1, 5]:

Լեոյի տեսադաշտում են եղել ոչ միայն հայ, այլև ռուս և համաշխարհային գրականության դեմքերը և գրական իրադարձությունները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-35>

Գրականություն

1. Բոմբարդ, Պոզիտիվիզմը, Թիֆլիս, 1913:
2. Гегель, «Философия религии» в двух томах, т.1, Москва, 1976.
3. История цивилизации Англии Бокля Санкт-Петербург, 1906.
4. Լեո, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Երևան, «Հայաստան», 1966:
5. Լեո, Երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, Երևան, «Հայաստան», 1987:
6. Լեո, Երկերի ժողովածու, իններորդ հատոր, Երևան, «Մտորիդային գրող», 1989:
7. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961:

Лео как историк литературы (культурно-историческая школа)

Александр Арам

Резюме

Ключевые слова: Бокль, научная историография, Лео, Гегель, географический детерминизм, Мхитаристы, природные влияния

В статье рассматривается историческая реальность перехода армянского литературоведения от просветительской традиции к позитивистской критике в контексте развития научного знания. Критически обосновывая позитивный характер исторической перспективы армянской литературы, Лео одновременно подчёркивает преемственность армянских литературоведческих школ. В отличие от своих предшественников, он выступает как последователь позитивистской школы критики и литературоведения.

Опираясь на опыт предыдущих исследователей, Лео в значительной степени способствовал переходу армянской литературы и ее исторического осмысления от провиденциалистских интерпретаций к научному объяснению культурных процессов. Как критик, он требовал, чтобы литература выражала определённую идейную тенденцию и оценивалась с позиций утилитаризма и исторического прогресса. По его мнению, литература должна содержать позитивное познание жизни и человеческой природы, а также выражать идеалы, направленные на общественный прогресс.

Литературное произведение, согласно Лео, должно воплощать тенденцию и идеал в самой структуре художественной реальности, а не лишь в образах героев-идеалистов. Подобная литература призвана служить благу нации, общества и человечества. Созданное на этих основаниях художественное творчество можно определить как форму утилитаристского реализма, эпистемологически связанного с утилитаристской философской традицией.

Leo as a Literary Historian (Cultural-Historical School)

Aleksanyan Aram

Summary

Key words: Buckle, scientific historiography, Leo, Hegel, geographical determinism, Mekhitarists, natural influences

The article examines the historical transition of Armenian literary criticism from the Enlightenment tradition to positivist criticism in connection with the development of modern science. Substantiating the positivist character of the historical interpretation of Armenian literature, Leo also emphasizes the continuity of Armenian literary schools.

Unlike many of his predecessors, Leo can be regarded as a representative of the positivist school of literary criticism. Building on the work of earlier scholars, he contributed to the shift in Armenian literary and historical studies from providential interpretations toward scientific explanations of cultural processes.

Leo argued that literature should contain a clear ideological tendency and be evaluated from a utilitarian perspective. Literary works, in his view, must express ideals of historical and social progress and provide a positive understanding of life and human nature. Such literature, aimed at the welfare of the nation, society, and humanity, may be described as a form of utilitarian realism grounded in utilitarian philosophical thought.

Ներկայացվել է 11. 12. 2025 թ.
Գրախոսվել է 01. 02. 2026 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.